



Կարգապահական գործ թիվ ԿԳ-25075

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՓԱՍՏԱՐԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՐԱՏԻ ԱՍՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետ նաև՝ Հանձնաժողով**), Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալոյանի, Հանձնաժողովի գեկուցող անդամ՝ Վահագն Քեչիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,
մասնակցությամբ՝ Մանյա Գասպարյանի, փաստաբան Մուրադ Ասրյանի և վերջինիս ներկայացուցիչ՝ փաստաբան Վրեժ Խաչիկյանի,
քննության առնելով փաստաբան Մուրադ Արարատի Ասրյանի (արտոնագիր՝ թիվ 877) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Մանյա Գասպարյանը (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ իր իրավունքների պաշտպանության համար դիմել է փաստաբան Մուրադ Ասրյանին:

Նշվածի կապակցությամբ 18.03.2024 թվականին վերջիններիս միջև կնքվել է պայմանագիր, որով փաստաբանը պարտավորվել է «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը վիճարկել դատական կարգով և իրականացնել ներկայացուցչություն բոլոր դատական ատյաններում:

Դիմողի պնդմամբ, փաստաբանը ներկայացրել է միայն մեկ ու կես էջանոց հայցադիմում, կատարել է սխալ նշում հրամանը ստանալու օրվա մասին, ներկայացրել է փաստաբանին գործի համար կարևոր փաստաթղթեր, սակայն դրանք գործով չեն ներկայացվել:

Դիմողը հավելել է, որ 22.12.2024 թվականին դատարանի կազմից տեղեկացել է, որ թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով կայացվել է որոշում և նրա որոշմանը ծանոթ է եղել նաև փաստաբանը, մինչդեռ վերջինս այն ուղարկել է Դիմողին 18.01.2025

**Թիվ ԿԳ-25075-2-Ա
19 նոյեմբերի 2025թ.**



թվականին, իսկ այդ ընթացքում չի տեղեկացրել Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին:

Դիմողը նշել է, որ 18.01.2025 թվականին փաստաբանի հետ հանդիպման ժամանակ հայտնել է վերջինիս, որ լուծում է պայմանագիրը և դադարեցնում լիազորագիրը, ինչի կապակցությամբ կազմվել է համաձայնագիր 20.01.2025 թվականին:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.07.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 28.07.2025 թվականին գրություններով ներկայացրել է իր և Փաստաբանի միջև նամակագրությունից քաղվածքներ, ծննդյան վկայականի և «Առմեդ» համակարգից արտատպված քաղվածք, խնդրել է որպես վկա կանչել Լիբերթի և Կոնցեռն Դիալոգ ընկերությունների իրավաբաններին:

Դիմողը 04.08.2025 թվականի գրությամբ հայտնել է, որ կներկայացնի Փաստաբանի հետ մուտքային և ելքային զանգերը:

Դիմողը 05.08.2025 թվականի գրությամբ ներկայացրել է «TeamTelecomArmenia» օպերատորի կողմից Դիմողի՝ 099963700 հեռախոսազանգերից 01.01.2025-31.01.2025 թվականներն, իսկ 06.08.2025 թվականի գրությամբ՝ 01.05.2025-31.05.2025 թվականներն ընկած ժամանակահատվածում ծառայությունների վերձանումների քաղվածքը:

Դիմողը 07.08.2025 թվականի ներկայացրել է իր և Փաստաբանի միջև տեղի ունեցած նամակագրության քաղվածքը, 11.08.2025 թվականին ներկայացրել է 11.06.2025 թվականին Փաստաբանից Դիմողին ուղարկված հաղորդագրությունը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ ծանոթ է եղել հայցադիմումին, սակայն ակնկալում էր, որ փաստաբանը կներկայացնի բոլոր ապացույցները:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մուրադ Ասրյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Մանյա Գասպարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 11.06.2025 թվականին ներկայացրել է բացատրություն, հայտնելով, որ պատշաճ իրականացրել է Դիմողի շահերի պաշտպանությունը՝ կազմել հայցադիմում և ներկայացրել այն դատարան, որը ստացել է թիվ ԵԴ2/3060/02/24 համարը, ինչպես նաև գործով ներկայացրել է Դիմողի կողմից մատնանշված բժշկական փաստաթղթերը:

Փաստաբանը հայտնել է, որ համաձայն չլինելով գործով կայացված վճռի հետ առաջարկել է Դիմողին բողոքարկել այն վերաքննիչ քաղաքացիական դատարան, սակայն Դիմողը հրաժարվել է:

Փաստաբանը հավելել է, որ մշտապես կապի մեջ է եղել Դիմողի հետ այդ թվում



սոցիալական հարթակներում, իսկ գործով վճռին ծանոթացել է 13.01.2025 թվականին և տեղեկացրել է Դիմողին:

Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 24.07.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում:

Փաստաբանը 04.08.2025 թվականին ներկայացված գրությամբ, ըստ էության, պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ ինքը ներկայացրել է Դատարան հղիության մասին սոնոգրաֆիայի արդյունքներով փաստաթուղթը 07.11.2024 թվականին, երբ Դիմողը ուղարկել է այն իրեն:

Փաստաբանը 11.08.2025 թվականի ներկայացրել է թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:

Հանձնաժողովի նիստին Փաստաբանն ըստ էության պնդել է իր դիրքորոշումը, նշելով, որ թիվ ԵԴ2/3060/02/24 գործով ապացուցման բեռ չի բաշխվել և չի սահմանվել ապացույց ներկայացնելու ժամկետ, իսկ ինքը դատական նիստին հարց էր ուղղել պատասխանող կողմին Դիմողի հղիության վերաբերյալ տեղեկացված լինելու մասին:

Փաստաբանը հայտնել է, որ հայցադիմումը ներկայացնելու պահին իր մոտ առկա չէր ապացույց Դիմողի հղիության մասին, սակայն նա մարտավարության տեսանկյունից պատրաստ էր դրան անդրադառնալ գործի քննության ընթացքում:

Փաստաբանի պնդմամբ, Դատարանը թույլ չի տվել կատարել հայցի հիմքի փոփոխություն և միանգամից անցել է դատաքննության:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 30.06.2025թ. թիվ 186-Ա/ԿԳ-25075 որոշմամբ փաստաբան Մուրադ Արարատի Ասրյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.5.5 և 3.6.1 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

03.07.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին **(այսուհետ նաև՝ Աշխատակից)**:

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 03.09.2025թ. կազմել է եզրակացություն:



Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-9-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 22.10.2025թ. ժամը 18:30-ին, 19.11.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ պարտավորվելով վիճարկել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը և իրականացնել ներկայացուցչություն բոլոր դատական ատյաններում: **Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, 18.03.2024 թվականի կնքված պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր), ինչպես նաև 18.03.2024 թվականի լիազորագրով:**

2. Տրված հանձնարարությանը համապատասխան Փաստաբանը կազմել և «Armllex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության միջոցով թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացրել էր հայցադիմում՝ խնդրելով անվավեր ճանաչել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը, վերականգնել Դիմողին նախկին աշխատանքում, բռնագանձել հարկադիր պարապորդ: **Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումով, ինչպես նաև թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Armllex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգից արտատպված քաղվածքով:**

3. Փաստաբանը հայցադիմումի շրջանակներում որպես «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանի վիճարկման հիմք վկայակոչել դրանում փաստական հիմքի բացակայությունը: **Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումով:**

4. Դիմողը հղիների հաշվառման գրանցամատյանից քաղվածքը ուղարկել է Փաստաբանին 14.10.2024 թվականին, իսկ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված 09.01.2024 թվականի ուլտրաձայնային հետազոտության փաստաթուղթը ուղարկել է Փաստաբանին 07.11.2024 թվականին: **Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի բացատրություններին կից ներկայացված «WhatsApp» հավելվածում Դիմողի և Փաստաբանի միջև առկա նամակագրության քաղվածքներով:**

5. Թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 13.11.2024 թվականի որոշմամբ բաշխվել է ապացուցման պարտականությունը, իսկ 13.11.2024 թվականի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության: **Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 04.12.2024 թվականի վճռով:**

6. Թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Փաստաբանը 19.11.2024 ներկայացրել է Դիմողի և «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի տնօրենի միջև



կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական փույծի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանին կարգապահական պարասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պարասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պարասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարծում է փաստաբանին կարգապահական պարասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պարասխանատվության ենթարկելու հիմք:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների



վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության ընթացքի մասին վստահորդին չտեղեկացնելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

• **արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,**

• **արդյո՞ք Փաստաբանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր Դիմողի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,**

• **արդյո՞ք Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հեղաքրքրող հարցերին:**

Վերոգրյալի համատեքստում, անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծին, Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխիղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխիղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

- ա. նյութերի ուսումնասիրությունը,
- բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,
- գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,
- դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հեղաքրքրող հարցերին:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության հնստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում



է փաստաբանի՝ որպէս իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Միաժամանակ, վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այլ կերպ ասած, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնի վերջինիս՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին:

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ պարտավորվելով վիճարկել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը և իրականացնել ներկայացուցչություն բոլոր դատական ասյաններում:

Տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կազմել և «Armlax» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի միջոցով թիվ ԵԴԴ/3060/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում 18.04.2024 թվականին ներկայացրել էր հայցադիմում՝ խնդրելով անվավեր ճանաչել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը, վերականգնել Դիմողին նախկին աշխատանքում, բռնագանձել հարկադիր պարապուրդ:

Մասնավորապես, Փաստաբանը հայցադիմումի շրջանակներում որպես «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանի վիճարկման հիմք վկայակոչել է դրանում փաստական հիմքի բացակայությունը:

Դիմողը 14.10.2024 թվականին Փաստաբանին ուղարկել է հղիների հաշվառման գրանցամատյանից քաղվածքը, իսկ 07.11.2024 թվականին՝ «Կառույց Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված 09.01.2024 թվականի ուլտրաձայնային



հետազոտության փաստաթուղթը, սակայն Փաստաբանը դրանց հաշվառմամբ փաստացի չի իրականացրել հայցի հիմքի լրացում և դրան վերաբերող ապացույցները թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով ներկայացրել է Դատարանին 19.11.2024 թվականին, մինչդեռ Դատարանը 13.11.2024 թվականի որոշմամբ արդեն բաշխվել է ապացուցման պարտականությունը և օրը կայացրել էր որոշում՝ գործը նշանակվելով դատաքննության:

Արդյունքում, Դատարանը 04.12.2024 թվականի վճռով (**այսուհետ նաև՝ Վճիռ**) մերժել է Դիմողի հայցը՝ միաժամանակ արձանագրվելով, որ «...*հայցվորը վկայակոչել է նոր փաստ, որ վիճելի անհատական իրավական ակտի կայացման պահին հայցվորը եղել է հղի, ... Դատարանը հայցվորի ներկայացուցչի փաստարկը, որ վիճարկվող 26.02.2024թ. թիվ 03/002-24 հրամանը չունի փաստական հիմք, անհիմն է համարում, քանի որ գործի քննությամբ հաստատվեց, որ նշված անհատական իրավական ակտը պարունակում է ինչպես փաստական, այնպես էլ իրավական հիմքերը:*»:

Հետագայում Փաստաբանը Վճիռը ուղարկել է Դիմողին 18.01.2025 թվականին, ինչից հետո Դիմողը ցանկացել է հրաժարվել Փաստաբանի ծառայություններից և լուծել նրա հետ կնքված Պայմանագիրը 20.01.2025 թվականին:

Հանձնաժողովը նախ հարկ է համարում ընդգծել, որ Դիմողի հղիության վերաբերյալ տեղեկատվությանը հայտնի է եղել Փաստաբանին հայցադիմումը Դատարան ներկայացնելիս, սակայն վերջինս չի անդրադարձել այդ հիմքին ելնելով մարտավարական տեսանկյունից՝ հետագայում, անհրաժեշտության դեպքում, կատարել հայցի հիմքի լրացում, ինչի կապակցությամբ ներկայացրել էր Դիմողին հնարավոր հետևանքները:

Չնայած, փաստաբանն ազատ է գործի շրջանակներում մարտավարության ընտրության հարցում, այնուամենայնիվ, Հանձնաժողովը փաստում, որ նախանշված մարտավարության շրջանակներում գործում շրջանակներում փաստաբանը պարտավոր է բոլոր դեպքերում ելնել իր վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Ըստ այդմ, Փաստաբանը թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի քննության ընթացքում ընդհուպ մինչև 13.11.2024 թվականը զրկված չի եղել հայցի հիմքի լրացում այն Դիմողի հղիության վերաբերյալ փաստերի ու ապացույցների հաշվառմամբ, մինչդեռ փաստացի չի ձեռնարկել անհրաժեշտ դատավարական գործողությունը (հայցի հիմքի լրացում կատարելու մասին միջնորդություն) և Դիմողի հղիության վերաբերյալ ապացույցները ներկայացրել է 13.11.2024 թվականից հետո՝ երբ ապացուցման պարտականությունը գործով արդեն բաշխվել էր և գործը նախապատրաստվել էր դատաքննության:

Այս առումով, անդրադառնալով Փաստաբանի պնդմանն առ այն, որ Դատարանը թույլ չի տվել կատարել հայցի հիմքի լրացում և չի ընդունել վերջինիս կողմից ներկայացված ապացույցները, Հանձնաժողովը արձանագրում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում առնվազն առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Դատարանը որևէ կերպ խոչընդոտել է այդ դատավարական իրավունքի իրացմանը:

Ընդ որում, նշվածի պայմաններում, Փաստաբանը որևէ կերպ զրկված չէր անհրաժեշտ միջնորդությունները ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունից:



Հանձնաժողովը ընդգծում է, որ գործնականում չեն բացառվում դեպքեր, երբ փաստաբանը ձեռնարկում է իրենից կախված և օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար, սակայն, այնուամենայնիվ, գործն ունենում է այլ ընթացք կամ ավարտ: Հենց այդ հաշվառմամբ, Օրենքով և Կանոնագրքով սահմանում են կարգավորումներ առ այն, որ փաստաբանը չի կարող տալ երաշխիքներ գործի արդյունքի մասով, ինչպես նաև ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված ակտն ինքնին չի առաջացնում կարգապահական պատասխանատվություն:

Այս առումով, կարգապահական գործում առկա ապացույցներից հետևում է, որ Փաստաբանը համակարգի միջոցով ընդամենը ներկայացրել է Դիմողի հղիության վերաբերյալ ապացույցները, սակայն դրան զուգահեռ չի ներկայացրել միջնորդություններ հայցի հիմքերը լրացնելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը փոփոխելու վերաբերյալ, ինչպես նաև ապացույց ներկայացնելու համար սահմանված ժամկետների բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ: Նշվածը, անկախ Դատարանի կողմից այդ միջնորդությունների ընդունման կամ քննարկման հանգամանքից, բավարար էր, որպեսզի Փաստաբանի կողմից ձեռնարկված գործողությունները բավարար Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության տեսանկյունից:

Հետևապես, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն առնվազն պարտավոր էր ձեռնարկել իրենից կախված և օրենքով չարգելված բոլոր գործողությունները գործի հնարավոր բացասական ելքի դեպքում դրանից բխող հետևանքները նվազեցնելու կամ բացառելու համար:

Բացի այդ, Հանձնաժողովը, անդրադառնալով Դիմողին, որպես վստահորդ, կանոնավորապես չտեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելու հարցին, արձանագրում, որ քննարկման առարկա է հանդիսանում Փաստաբանի կողմից Վճիռը ստանալու պայմաններում Դիմողին դրա ընդունման մասին չտեղեկացնելու հարցը:

Հատկանշական է, որ Դատարանը 04.12.2024 թվականի վճիռը փաստացի ստորագրվել է 13.12.2024 թվականին և առնվազն այդ օրը հասանելի է եղել Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում, որպիսի պայմաններում, նկատի ունենալով դրա հետագա բողոքարկման անհրաժեշտության առաջանալու հարցը, Փաստաբանը պարտավոր էր առնվազն տեղեկացնել Վճիռի մասին Դիմողին այնպես, որպեսզի վերջինս ունենա որջամիտ ժամկետ դրա հետագա ընթացքը որոշելու համար:

Հանձնաժողովը փաստում է, որ Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի միջոցով Փաստաբանին, որպես համակարգից օգտվող անձի հասանելի էր հենց այն պահից, երբ բեռնվել է Դատարանի կողմից: Ըստ այդմ, նկատի ունենալով, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, թե կոնկրետ երբ է ստացել Վճիռը, իսկ Վճիռը փաստացի ստորագրվել է 13.12.2024 թվականին, Հանձնաժողովն արձանագրում է, որ առնվազն 13.12.2024 թվականին Վճիռը հասանելի էր եղել համակարգում և ուղարկվել էր Փաստաբանին, սխալ էր Վճիռը Դիմողին ուղարկվել է 37 օր անց՝ 18.01.2025 թվականին



Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրություններ և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, այն հանգամանքը, որ Փաստաբանը առնվազն կարող էր և պարտավոր էր ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, ինչպես նաև ժամանակին տեղեկացներ Դիմողին Վճռի կայացման մասին, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մուրադ Արարատի Ասրյանի (արտոնագիր՝ թիվ 377) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին»



օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝

Թիվ ԿԳ-25075-2-Ա
19 նոյեմբերի 2025թ.
ք.Երևան



Տաթևիկ Շալջյան